ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԻՄԻՏՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄ

10 ապրիլի 2013 թվականի N 4-Ն

ԴԻՄԻՏՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 2-րդ կետով ավագանին ՈՐՈՇՈՒՄ Է.

Հաստատել համայնքի զարգացման քառամյա ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

Կողմ-7 դեմ-0

Ավագանի՝ ---------- Հ. Եղիազարյան
---------- Հ. Մնացականյան
---------- Է. Սիմոնովան
---------- Հ. Բարսեղյան
---------- Ս. Ղազարյան
---------- Գ. Միրզոյան
---------- Ե Մխիթարյանը:

Համայնքի ղեկավար ---------- Ա. Իոնանով

Հավելված

Դիմիտրով գյուղական համայնքի ավագանու
2013 թվականի ապրիլի 10-ի թիվ 4 -Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԻՄԻՏՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ

Ծրագիր 1

- Խմելու ջրի ներհամայնքային ցանցի նոր ջրագծերի անցկացում

Նպատակ- բնակչությանը ապահովել որակյալ, կայուն մատակարարվող խմելու ջրով.

Խնդիր 1 – 2013 թ. իրականացվող նոր խմելու ջրագծերի անցկացման համար համայնքի բնակչության աշխատուժի օգտագործում

Պատասխանատու-գյուղապետարան

Ծրագիր 2

- Ոռոգման ջրի ներքին համակարգի վերանորոգում

Նպատակ- ապահովել համայնքի հողերի նորմալ ոռոգումը.

Խնդիր 1 – 2015 թ. սեփական միջոցներով և տարածքային ջրային տնտեսության հետ կազմակերպել ներքին ցանցի վերակառուցման աշխատանքները.

Պատասխանատու-գյուղապետարան

ՓՈՂՈՑՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

Ծրագիր 1

- Փողոցային լուսավորության կառուցում

Նպատակը-համայնքի փողոցների լուսավորում և նոր փողոցներում էլեկտրասների տեղադրում և լուսավորության անցկացում

Խնդիր 1 –2013-2015 թթ ընթացքում գյուղապետարանի հաշվի կառուցել փողոցների լուսավորությունը ներդնելով 600.0 հազար դրամ .

Պատասխանատու-գյուղապետ

Ծրագիր 2

- Համայնքի փողոցների ասֆալտապատում և խճապատում

Նպատակը- համայնքի դպրոց և մանկապարտեզ տանող ճանապարհների ասֆալ – տապատում, նոր փողոցների խճապատում:

Խնդիր –մինչև 2016 թվականը գյուղապետարանի և դոնոր կազմակերպությունների միջոցների հաշվին կատարել դպրոց և մանկապարտեզ տանող 800մ ճանա-պարհի ասֆալտապատման աշխատանքներ և 700մ նոր փողոցների խճապատում

Պատասխանատու-գյուղապետ

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՄՇԱԿՈՒՅԹ

Ծրագիր 1

- Մանկապարտեզի, գրադարանի շենքերի հիմնանորոգում:

Նպատակ-աշխատանքային պայմանների, սանիտարական վիճակի բարելավում:
Խնդիր 1- մինչև 2014 թվականի վերջը ձեռք բերել օժանդակությունը մանկապարտեզի ամբողջ շենքի վերանորոգման նպատակով:
Խնդիր 2 –մինչև 2016 թվականի վերջը ավարտել մանկապարտեզի շենքի վերանորոգման աշխանաքները, ներդնելով համայնքի բոլոր միջոցները:
Խնդիր 3 –մինչև 2016 ավարտել գրադարանի շենքի հիմնանորոգումը

Պատասխանատու-գյուղապետ

ԿԱՊԻՏԱԼ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ծրագիր 1

- Համայնքի նոր փողոցների գազաֆիկավում:

Նպատակը – համայնքի բնակիչների կենցաղային պայմանների բարելավում:

Խնդիր – 2015 թ. գյուղապետարանի միջոցներով կառուցել 500 գմ գազատար:

Պատասխանատու – գյուղապետարան

Ծրագիր 2

- Համայնքի բնակավայրի ներսում հանգստի գոտու կառուցում:

Նպատակը – համայնքի բնակիչների հանգստի կազմակերպում:

Խնդիր –մինչև 2014 թ. վերջը գյուղապետարանի միջոցներով կառուցել հանգստի գոտի բնակավայրի ներսում

Պատասխանատու – գյուղապետարան